ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(«Հռիփսիմյանց վկայաբանություններ»)

Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն տեքստի գոյության մասին անդրանիկ տեղեկություն հրապարակվեց ձեռագրերի նկարագրության առիթով. Թեյմուրազ Արքայաղնը 1835 թ. կազմում է իր ձեռագրական հավաքածոյի նկարագրությունը և մեկ օրինակ տրամադրում ակադ. Մ. Բրոսեին։ Վերջինս 1838 թ. թարգմանաբար հրատարակում է այդ ցուցակը՝ հավատարիմ մնալով բնագրին։ Ի թիվս այլ ձեռագրերի, այստեղ ներկայացվում է և մի «Վարք սրբոց», ուր կա նաև մեզ հետաքրքրող վկայաբանությունը[1]։ Հետագայում, պրոֆ. Դ. Զուբինաշվիլու գրադարանն ու հավաքածոն ուսումնասիրելիս, Ա. Ցագարելին գտնում է Թեյմուրազի նկարագրության մեկ օրինակ ևս, ուր, բնականաբար, ներկայացված է և «Հռիփսիմյանց վկայաբանությունը»[2]։ Վրաց մատենագրությանը լավատեղյակ Արքայաղնը ձեռագրի նկարագրության վերջում ավելացնում է մի ուշագրավ դիտողություն —ესე ჩვენთ წმიდათ ქართველთ მამათაგან აღწერილ არს ძველადვე— Այս մեր վրաց սուրբ հայրերի կողմից նկարագրված է հնուց ի վեր[3]։ Խոսքը վերաբերում է ոչ թե Հռիփսիմյանց վարքի տվյալ տեքստին, այլ այն փաստին, որ նրանց նահատակության, Տրդատի արարքի և Վաղարշապատում կատարված իրողության մասին խոսում են հին շրջանի վրացական հուշարձանները ևս։ Թեյմուրազը, անկասկած, նկատի ունի «Վրաց դարձի» հեղինակի և Լեոնտի Մրովելու հաղորդումները։ Փաստորեն հիշյալ դիտողությունը աղբյուրագիտական նախնական կոահում է։ Այսպիսով, 1838 թ. ֆրանսերեն, իսկ 1894-ին՝ վրացերեն լեզվով ծանուցվում է երկիս գոյությունը։ Ինչպես հայտնի է, Թեյմուրազ Արքայաղնի հավաքածոն 1848 թ. տեղափոխվում է Ասիական թանգարան և կազմում, մասամբ արդեն եղածի հետ, նրա վրացական բաժինը։ Մեզ հետաքրքրող ձեռագիրը ստանում է նոր համար՝ Manuscr. Georg. № 56[4]։

---

[1] Catalogue de livres Géorgiens tant imprimés que manuscrits, anciens et modernes. *տե՛ս* M. Brosset, Discours prononcé a l'Assamblée générale de l'Académie Impériale des Sciences de St.-Pétersbourg, St.-Pet., *1838, էջ 73։*

[2] *Ցուցակի վրացերեն բնագրի խորագիրն է.* „წიგნნი საღმრთონი ქართულისა ენისანი, ოომელნიცა იპოვებიან მათის უგანათლებულესობისა მეფის ძის თეიმურაზ გიორგის ძის წიგნთა საცავსა შინა“, *տե՛ս* А. А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, т. I, вып. III, СПб., 1894, *էջ 149—186։*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 160. Մ. Բրոսեի թարգմանությամբ՝* Cette vie et ces martyres ont été écrits par des saints pères géorgiens (*նշվ. աշխ., էջ 73*)։

[4] *Այժմ՝ Արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի վրացական հավաքածո, ձեռ.* C—12։

Ա. Ցագարելու հիշատակված գրքում նույն 1894 թ. տպագրվում է նաև Դ. Զուբինաշվիլու (Д. И. Чубинов) գրադարանի հանգամանալից նկարագրությունը, որ կատարել է Արևելյան ֆակուլտետի ուսանող Մ. Քարթվելիշվիլին՝ նույն Ա. Ցագարելու ղեկավարությամբ ու հսկողությամբ[5]։ Այս ցուցակի № 17-ի տակ ներկայացված է մի «Վարք սրբոց», ուր կա նաև „წამება წმიდათა ქალწულთა რიფსიმე და გაიანესი“ («Վկայաբանություն սրբոց Հռիփսիմեի և Գայանեի»)[6]։ Ուշագրավ է, որ այս ձեռագիրն ունի ճիշտ նույն բովանդակությունը, ինչ Թեյմուրազի հավաքածոյում եղածը, բայց տարբեր է նրանից էջաքանակով (265 էջ) ու ստացողի հիշատակարանով։ Հետագայում, ի կատարումն Դ. Զուբինաշվիլու խոստման ու ցանկության, այդ հավաքածոն ժառանգները (Ն. Դ. Զուբինաշվիլի) նվիրեցին Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերությանը։ Դրանով իսկ «Հռիփսիմյանց վկայաբանությունը» բովանդակող ձեռագիրը տեղափոխվեց Թբիլիսի և այժմ գտնվում է Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (S—3640)[7]։

Հաջորդ տարիներին բանասիրական գրականության մեջ «Հռիփսիմյանց վկայաբանությանը» առիթ չի եղել անդրադառնալու։ 1915 թ. հրապարակած մի ծանոթությունից տեղեկանում ենք, որ Ն. Մառը «վաղուց արտագրել է» Ասիական թանգարանի ձեռ. № 56-ից (այժմ՝ C—12) Հռիփսիմյանց վարքը «հրատարակության համար»[8]։ Սակայն, ի վերջո, նա չի իրականացրել այդ ցանկությունը և առհասարակ հուշարձանիս մասին որևէ տպագիր հիշատակություն չունի։ Նույն 1915 թ. Լ. Մելիքսեթ-Բեկը «Христианский Восток»-ում հանդես եկավ մի կարճառոտ հաղորդմամբ (շուրջ 1/3 տպագիր էջ ծավալով), ուր ծանուցում էր «Հռիփսիմյանց վկայաբանություն» բովանդակող երկրորդ գրչագրի երևան գալը[9]։ 1910 թ. Վ. Մակաշվիլին Վրաց եկեղեցական թանգարանին է նվիրում մի շարք վրացերեն գրչագրեր, այդ թվում մեկը՝ մեզ հետաքրքրող հուշարձանը բովանդակող, որը գրանցվում է № 1043-ի տակ։ Խոսքը վերաբերում է այժմ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի A—1043 գրչագրին։ Լ. Մելիքսեթ-Բեկի տեղեկանքը ավարտվում է հետևյալ բնութագրմամբ. «Судя по всему, рукопись является копией с более древнего подлинника, восходящего к греческой (а не армянской) редакции агиографического памятника-метафраса, причем она характеризуется удивительною непоследовательностью в орфографии, изобилует искажениями, недомолвками и прочими недостатками»[10].

---

5 А. А. Цагарели. Նշվ. աշխ., էջ XIV։ Ցուցակի հրատարակությունը տե՛ս նշվ. աշխ., էջ 102—148, խորագիրը՝ Список грузинских рукописей и старопечатных книг библиотеки профессора Д. И. Чубинова.

6 Տե՛ս А. А. Цагарели, նշվ. աշխ., էջ 105։

7 Ինչպես երևում է, Թեյմուրազ Արքայազնի և Դ. Զուբինաշվիլու հավաքածոներում պահված այս երկու ձեռագրի բովանդակության նույնությունը և մասամբ էլ Թեյմուրազի կազմած ցուցակի՝ Դ. Զուբինաշվիլու հնադարանում գտնվելու պարագան, շփոթության մեջ են դցել Լ. Մելիքսեթ-Բեկին, որը կարծել է, թե Ցագարելու գրքում խոսքը մեկ ձեռագրի է վերաբերում, ուստի 1915 թ. իր հաղորդման մեջ (Х. В., т. III, 1915, էջ 313) Թեյմուրազի հավաքածոյի ձեռագրի մասին խոսելիս այն համարում է միակը։

8 Х. В., т. III, էջ 313, ծան. 5։

9 Л. Меликсет-Беков, Новый список «Жития св. Рипсимии, Гаянии и сподвижниц» на грузинском языке, Х. В., т. III, вып. 1915, էջ 313—314։

10 Նույն տեղում, էջ 314։

«Հռիփսիմյանց վկայաբանության» նկատմամբ գիտնականների հետաքրքրությունը առավել մեծացավ 1930-ական թթ., որ պայմանավորված է պրոֆ. Ռ. Բլեյկի մի ուշագրավ հրապարակումով. Քեմբրիջի համալսարանի գրադարանի վրացերեն ձեռագրերը նկարագրելիս նա ի հայտ բերեց XI դարի գրչություն ունեցող մի պատառիկ՝ «Հռիփսիմյանց վկայաբանության» հին վրացերեն թարգմանությունից պահպանված (Add. 1890. 3)։ Գիտնականը, նպատակ չունենալով զբաղվել պատառիկի ու առհասարակ այդ հուշարձանի բնագրագիտական ուսումնասիրմամբ, վերծանեց պատառիկը և հրապարակեց այն[11]։ Հետագայում երկիցս այս պատառիկին անդրադարձավ պրոֆ. Ժ. Գարիտը, մեկ դեպքում այն համեմատելով Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության համապատասխան հատվածի հետ[12], իսկ երկու տարի անց՝ տալով պատառիկի իր վերծանությունը, տեքստի նմանահանությունը, թարգմանությունն ու հունարեն-հայերենի համադրությունը[13]։ Գարիտը, սակայն, ձեռքի տակ ամբողջական թարգմանություն չունենալու պատճառով, իր կատարած քննությունը սահմանափակել է պատառիկի տեքստի շրջանակներում։

Նույն 1930-ական թթ., ճիշտը՝ 1934 թ., «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն խմբագրության տեքստով սկսում է զբաղվել պրոֆ. Ի. Աբուլաձեն. սկզբնապես նա հաղորդում է հրապարակում երկիս վրացերեն խմբագրության գոյության մասին[14], իսկ ապա ծանուցում, որ ինքը Վրաստանում առկա ձեռագրերի հիմամբ, համապատասխան ուսումնասիրությամբ, հրատարակության է պատրաստել այդ տեքստը[15]։ Գիտնականը միաժամանակ որոշ նախնական դրույթներ է հրապարակում թարգմանության ժամանակի ու աղբյուրագիտական աղերսի մասին[16]։

Ի վերջո, 1960 թ. լույս տեսավ պրոֆ. Ի. Աբուլաձեի վաղուց արդեն պատրաստած տեքստը՝ ներածական հոդվածով, որտեղից հայտնի է դառնում, որ Վրաստանում պահվում է «Հռիփսիմյանց վկայաբանության» վեց գրչագիր (A—511, A—1043, A—1121, S—3640, Քութայիսի թանգ. № 193, Թբիլիսի կենտր. պատմ. արխիվի № 87)։ Վկայաբանության անդրանիկ հրատարակությունը Ռ. Աբուլաձեն կատարել է հիմնականում ըստ A—511 ձեռագրի, որ XVI—XVII դարերի է՝ ըստ գրչության, պակասավոր տեղերը քաղելով Քութայիսի № 193 ձեռագրից[17]։ Երկու տարի անց այս հուշարձանով վաղուց արդեն հետաքրքրվող Ժ. Գարիտը անհրաժեշտ է համարում լատիներենի թարգ-

---

[11] Տե՛ս Harvard Theological Review, t. XXV, 1932.

[12] G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vatican, 1946. էջ 13—16։

[13] G. Garitte, Sur un fragment.... „Le Muséon", t. LXI, 1—2, էջ 89—102։

[14] ი ლ. ა ბ უ ლ ა ძ ე, ძველი სომხური ენა. ქრესტომათია, წერის ნიმუშებითა და ლექსიკონით, ტფ., 1935, էջ 180, შენ.

[15] ი ა კ ო ბ ც უ რ ტ ა ვ ე ლ ი, მარტვილობაჲ შუშანიკისი, ქართული და სომხური ტექსტები გაძოსცა, გაძოკვლევა, ვაოიანტები, ლექსიკონი და საძიებლები დაურთო ილია აბულაძემ, ტფ., 1938, გვ. 040—041. Հմմտ. ი ლ ი ა ა ბ უ ლ ა ძ ე. ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX—X სს-ში, თბ., 1944, էջ 075։

[16] Այդ տեղեկանքներին մասամբ անդրադարձել է սկսած Կ. Կեկելիձեն, տե՛ս նրա ძველი ქართ. მწერლობის ისტორია, I³, თბ., 1953, էջ 215։

[17] ი ლ. ა ბ უ ლ ა ძ ე, აგათანგელოსის „რიფსიმიანთა მარტვილობის" ძველი ქართული თარგმანი, „საქ. მეც. აკადემიის ხელნაწერთა ინსტიტუტის მოამბე, II, თბ., 1960, էջ 145—180։

մանել Ի. Աբուլաձեի հրատարակած բնագիրը, համառոտակի ծանուցելով և ներածական հոդվածը[18]։

Այսպիսին է «Հռիփսիմյանց վկայաբանության» բնագրի երևան գալու, ուսումնասիրության ու հրատարակության պատմությունը[19]։

Վրացերեն թարգմանության բնագրի հարցը

Պրոֆ. Ռ. Բլեյկը, ինչպես նշվեց, բավարարվել էր պատառիկի հրատարակությամբ, նրա հանգամանալից քննությունը թողնելով հետագա բանասերներին։ Մինչդեռ Ժ. Գարիտը պատառիկի ընձեռած նյութի սահմաններում համադրեց հայերեն և վրացերեն տեքստերը և հավաստեց հայերեն բնագրից թարգմանված լինելու պարագան։

Հիշյալ վկայաբանության ամբողջական տեքստը հրատարակելու կապակցությամբ, բնականաբար, ինչ լեզվից թարգմանած լինելու հարցին առավել մանրամասնությամբ անդրադարձավ հանգուցյալ պրոֆ. Ի. Աբուլաձեն։ Ստորև անհրաժեշտ ենք համարում թվարկել նրա բոլոր հիմնական վկայակոչումները.

ա. Վրացերենում հատուկ անունները մեծ մասամբ փոխանցված են հայերենին բնորոշ երանգներով և իրենց զուգահեռությունը չեն գտնում այլ լեզուներով գոյություն ունեցող խմբագրություններում։ Աշխարհագրական տեղանուններից այդպիսիք են. „ვალენშეა ქალაქი“ իբրև համապատասխանություն հայերենի «Վաղարշապատ»-ին, „არტაშა ქალაქი“ — «Արտաշատ քաղաք», „ნოროქალაქი“ — «Նորաքաղաք»։ Բայց կան նաև այնպիսի հատուկ անուններ, որոնք հայերենի տառադարձություն չեն ներկայացնում (კუბანი (!)—Ամրպատական, არშაკთა სოფელი—Պարթևաց կոմ, სარკინოზნი—Տաճկաստան, ფრომანი—Յունաց աշխարհ, სუსან—Շուշան)։ Բացառությամբ „კუბანი“-ի մյուս ձևերը վկայված են նաև վրացական այլ աղբյուր ներում ու տեքստերում։

բ. Վրացերեն տեքստն առատ է հայ-վրացական ընդհանուր գործածություն ունեցող բառերով, որ հիմնականում պայմանավորված է հայերեն բնագրի թելադրությամբ (ამბოხი, გეჰენია, ჟამი, ურაკპარაკი, ჰროვაოტაკი, ქალაქი, ჰამბავი, დასი, ბილწი, პარი և այլն)։ Ի. Աբուլաձեն նկատված բառագանձը բաժանում է չորս խմբի. 1) այլ լեզուներից հայերենի միջնորդավորմամբ վրացերենին անցած բառեր (թվով 8), 2) բառեր, որոնց ծագումը հայերենում բացահայտված չէ (թվով 5), 3) հայերենից եկող փոխառություն (մեկ բառ՝ սաստիկ-սաստ), 4) եկամուտ բառեր, որոնք կարող են վրացերենին անցած լինել նաև անմիջականորեն՝ առանց հայերենի միջնորդավորման (թվով 11)։

---

18 G. Garitte, La passion des saintes Rhipsimiennes en géorgien (Agathange, ch. XIII—XIX), „Le Muséon“, t. LXXV, 1—2, էջ 233—251։

19 1949—1950 թթ. Թբիլիսիում հրատարակվեց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի ձեռագրական հավաքածոյի երկհատոր նկարագրությունն։ Այդ հավաքածոյի № 435 ձեռագրում (գրված XIX դ.) կան Գրիգոր Լուսավորչի վարքի, կրած տասներկու չարչարանաց և Հռիփսիմեի ու այլոց նահատակության վրացերեն միանգամայն այլ խմբագրություններ, որոնք ուշ շրջանի արտագրանք լինելով հանդերձ՝ ուշագրավ իրողություններ են։ ალექსანდრ სახელმწიფო საისტორიო არქივი, ქართულ ხელნაწერთა კოლექციის აღწერილობა, ტ. II, შედგენილია პროფ. ს. კაკაბაძის და პ. გაგოშიძის მიერ, აკად. კ. კეკელიძის რედაქციით, თბ., 1950, էջ 72—73։

գ. Վկայաբանության հայերեն բնագրում (հրովարտակի մասում) կա մի այսպիսի արտահայտություն՝ «և ինչ համեստութիւն ոչ գոյ ի նոսա», որ բացակայում է Ագաթանգեղոսի հունարեն ընդարձակ խմբագրությունում, իսկ վրացերենում փոխանցված է այսպես. „არა თუ სიმტკიცე რაჲმე არს მათ თანა“. Վրացերեն կոնտեքստում անհասկանալի է სიმტკიცე բառը և չի համապատասխանում հայերենի «համեստութիւն»-ին։ Ըստ երևույթին, թարգմանիչը շփոթել է «համեստութիւն» և «հաստատութիւն» բառերը, որ գրչությամբ հնարավոր է, ուստի իրենից non sens է ներկայացնում։

Այս երեք կետերում տրված պատճառաբանություններից առավել զորավորը վերջինն է՝ գրչական հիմքի վրա «համեստութիւն»-ի «հաստատութիւն» ընկալումը, իսկ մյուսներին կարելի է նաև այլ բացատրություն գտնել։ Այսպես՝ հիմք ընդունելով մի շարք հատուկ անունների փոխանցման ոչ համապատասխանությունը հայերենին կարելի կլիներ պնդել, թե թարգմանիչը որոշ դեպքում նախընտրել է այլ աղբյուրներից ու կենդանի իրականությունից իրեն հայտնի անվանաձևերը, իսկ հիմնականում՝ առկա ինքնատիպությունները արդյունք են բնագրին հետևելու, որ այս պարագայում, բնականաբար, հայերեն չպետք է լիներ, որովհետև դրանք շատ հեռու են հայերեն տեքստի տառագարձում-փոխանցում կամ երբեմն նույնիսկ՝ ստույգ համապատասխանություն լինելուց (კუბანი —Ատրպատական, არშაკთა სოფელი —Պարթևաց կողմ, სარკინოზი—Տաճկաստան, ფრომანი—Նունաց աշխարհ)։ Հայ-վրացական ընդհանուր գործածություն ունեցող բառագանձին ևս կարելի է այլ պատճառաբանություն տալ. դրանք, ըստ մեծ մասի, միայն այս հուշարձանին չեն հատուկ, այլև V դարից սկսած հայերենից կատարված բազմաթիվ թարգմանությունների հետևանքով քաղաքացիություն-գործածություն են ստացել վրաց մատենագրության մեջ առհասարակ, դրանով իսկ դադարել են այլևս իբրև հայկաբանություն ընկալվելուց։ Ուշագրավ է, որ ոչ քիչ թվով հայ-վրացական գործածություն ունեցող բառեր կարելի է գտնել, օրինակ, «Գրիգորի վարքի» մետափրասյան խմբագրության վրացերեն տեքստում, որի հունարենից թարգմանված լինելը կասկածից դուրս է (ოხჯანი—վախճան, დანაკი — դանակ և այլն)։ Ուրեմն, կրկնում ենք, առավել զորավոր փաստը «համեստութիւն» և «հաստատութիւն» շփոթն է։ Հին տեքստերի բնագրի-թարգմանության հարցերով զբաղված մասնագետի համար այդ միակ կռվանն իսկ բավական է հայերենից թարգմանված լինելը այլևս ապացուցված ճանաչելու համար։ Բայց քանի որ այդ փաստը միակն է՝ կարող են զանազան կասկածներ առաջանալ, մասնավորապես՝ արդյո՞ք դա պատահական բնույթ չի կրում կամ գուցե՝ հայերե՞ն է աղավաղվել-շփոթվել, կապ չունենալով վրացերեն թարգմանության հետ[20]։ Իրականում այս բոլոր առարկում-կասկածներն ավելորդ են, որովհետև վրացերեն տեքստում կան պրոֆ. Ի. Աբուլաձեի ու մյուս գիտնականների կողմից չնկատված այնպիսի իրողություններ, որոնք անկասկած բխում են հայերեն բնագրից և իբրև այդպիսին՝ հայերենից թարգմանված լինելու անվերապահ ապացույցներ են։ Ստորև բնագրի ու թարգմանության համադրությամբ կաշխատենք վկայակոչել հիշյալ իրողությունները։

---

20 Կարող են նույնիսկ ասել, թե ճիշտը «հաստատութիւն»-ն է, սպասելի ու անսպասելի զանազան իմաստ ու նշանակություն վերագրելով առկոչված արտահայտությանը։

1. «Դէպ եղև տեսանել ինձ յաղանդոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս և գեղեցիկ...» (§ 155):

და უფროჲსად ესე გიკვრდინ, რამეთუ ქალსახლისი ჩუენი ქმნულკეთილი...

Հայերենի իմաստը միանգամայն հասկանալի է՝ պատկերահանների միջոցով կայսրը տեղեկացել է մի օրիորդի (Հռիփսիմեի) գեղեցկության մասին, մինչդեռ վրացերենում, հակառակ նախորդ ողջ պատմությանը, Հռիփսիմեն որակվում է իբրև «մեր գեղեցիկ տանու օրիորդ»: «Մերը» այստեղ անտեղի է, եթե չասենք՝ ավելորդ: Հայերեն և վրացերեն տեքստերում եղած այս հակասություն-տարբերությունը պարզապես գրչական սխալ ընթերցման արդյունք է. վրացի թարգմանիչը հայերենի «մի»-ն իբրև «մեր» է ընկալել՝ ჩუენი.

2. «Երթեալ առ հնձանօքն, ուր էին իսկ յառաջ վանք իւրեանց՝ ձայն աւետեաց մատուցանէր ընկերացն» (§ 192):

განვიდა და მივიდა სასაწნეხლეთა მათ, სადა-იგი იყო პირველად სავანე მისი, და სიტყუაჲ სახაოებისაჲ: მიართუა მოყუასთა მათ...

Հայերենում արտասովոր ոչինչ չկա. Հռիփսիմեն հաղթահարել է բոլոր չարչարանքները և ընկերների մոտ վերադառնալով՝ «ձայն աւետեաց մատուցանէր», մինչդեռ մեզ հետաքրքրող արտահայտության դիմաց վրացերենում ունենք «ձայն ավետարանի մատուցեց ընկերներին»: Նորից գործ ունենք հայերենի հիմքի վրա կատարված թյուրըմբռնման հետ. թարգմանիչը «աւետեաց»-ը ընկալել է իբրև «աւետարանաց» (sic!) և համապատասխանաբար „სახარებისა“ թարգմանել[21]:

3. «Այլ մեզ լաւ է մեռանել ի սրբութեան քում, քան թէ ձգիցեմք զձեռս մեր յաստուածս օտարս...» (105$_{4-5}$):

ხოლო ჩუენდა უმჯობეს არს სიკუდილი სოწმიდით, ვიდრე არა განთუვიპყრნეთ ველნი ჩუენნი ღმერთთა მიმართ უცხოთა...

Վրացերեն թարգմանությունը միանգամայն կհամապատասխաներ հայերեն բնագրին, եթե այն չունենար ընդգծված արա ծխտականը, որովհետև հայերենում այն չկա և չի էլ ենթադրվում: Այդ, ինչպե՞ս է առաջացել նշածս երևույթը. վկայակոչված նախադասությունը բառական նույնություն ունի բնագրի հետ, և միայն հայերենի «քան»-ն է, որ կարող էր արտահայտվել և միայն ՀՀ-ով, մինչդեռ ունենք ვიდრე თუ (քան թե), որ նորից սովորական համապատասխանություն է (թեև ոչ հաճախակի գործածվող): Նշանակում է արա-ի դոյացման պատճառը պետք է փնտրել գրաբարի «քան թէ»-ի մեջ. թարգմանիչը պարզապես այն «չէ» է կարդացել (երկաթագրի Թ-ի և Ջ-ի շփոթման հետևանքով), ուստի «քան չէ»-ն թարգմանել է ვიდრე არა, որ ամենևին հարիր չէ գործածված տեղին[22]:

4. «...յորժամ առաբեսցես զդա «ի պատրաստ լուսոյ բնակութենէդ հայել յամենայն բնակիչս երկրի» (105$_{11-12}$):

რაჟამს მოვიდეს დიდებით ჰაეროვნებითა ნათლისაჲთა მოხედვად ყოველთა დამკვდრებელთა სოფლისათა.

Նախ դիտենք, որ մեզ հետաքրքրող բառը («պատրաստ») Սաղմոսից քաղված արտահայտության մեջ է գտնվում. «Ի պատրաստ բնակութենէ իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի» (Սաղմ., ԼԲ, 14) և տարբերությունները

21 Թերևս բառաքաղատումն է սխալ՝ სიტყუაჲსა ხარებისაჲ?

22 Շփոթենք ვიდრე արա ոճական դարձվածքի հետ:

չունի ո՛չ Ագաթանգեղոսի մոտ, և ո՛չ էլ Աստվածաշնչում (1805 թ. հրատ.), մինչդեռ վրացերենի ჰაეროვნებითა-ն (վայելչություն, պարարտություն) բացարձակապես կապ չունի ո՛չ Ագաթանգեղոսի ընդգծված բառի, և ո՛չ Սաղմոսում եղածի հետ (վրաց. Սաղմ. ունենք. „განმზადებულით სამკვდრებელით თესლით მოხედნა უფალმან ყოველთა დამკვდრებელთა სოფლისათა“): Մնում է միակ եզրակացությունը՝ թարգմանիչը հայերենի «պատրաստը» ընթերցել է իբրև «պարարտ» (?) և թարգմանել ჰაეროვნებითა.

5. «Նաև նախարարք և մեծամեծք աւագանւոյն ընթացեալք ի տեսանել՝ զմիմեամբք ելանեին» (§ 163):

«Նաև աղատակոյտն, խառնաձաղանձ ամբոխիւն հանդերձ, զմիմեամբք դիպանէին ի միմեանց վերայ...» (§ 163):

„...და მთავართა მათგანნი [იგიცა] ერთიერთსა ჰხდებოდა“

„...და დასდებდეს ერთიერთსა დასულებითა სიცოფისა...“

Վրացերենում ընդգծված „ერთიერთსა“-ն բացորոշ հայկաբանություն է, որ արդյունք է բնագրի «զմիմեամբք»-ի պատճենման: Բայց քանի որ հին վրացական տեքստերում այդ բառն արձանագրված է, ապա կարելի է մտածել, որ այն արդեն լայն գործածություն է ունեցել: Եթե այդ բառն այստեղ վկայակոչում ենք, ապա նկատի ունենք համաբնույթ այլ իրողությունների առկայությունը մեր տեքստում: Այսպես, հայերեն «որ եկեալ էին զնմանէն՝ տանել յարքունիս, և նախարարքն և մեծամեծք աւագանւոյն» (§ 173) նախադասության դիմաց վրացերենում ունենք. „რომელნი ბოსტოლ იყვნეს წარყვანებად მისა სამეფოდ, მთავარნი იგი და დიდ-დიდები მოხუცებულთა მათ“, ուր պատճենված է հայերենի «մեծամեծք»-ը: Բառապատճենման արդյունք է նաև հայերեն «պարկեշտաժողով»-ի փոխանցումը տառացի նշանակությամբ՝ „უბიწოდ-კრებულითა“, որ ամենևին սովորական չէ վրացերենի համար: Ավելին, հայերեն բնագիրը չիմանալու դեպքում այն ընթերցողին կարող է անհասկանալի մնալ: Ճիշտ նման ձևով է պատճենված նաև հայերեն բնագրի «ասպազէն»-ը՝ ცხენოსჭური. որ կազմված է ասպ (ცხენი)+զէն(ჭური) բառերից, մինչդեռ հին վրացերենն ունի իր համապատասխան տերմինը: Հայերենից է բառապատճենվել նաև մեր տեքստի სიწმიდით-ზრდილი, որ տառացիորեն համապատասխանում է «սրբասուն»-ին (բնագրում՝ սրբասնելովն), իսկ «ընդ կողմանս-կողմանս» արտահայտությունը, թարգմանության այդ նույն սկզբունքին ենթարկվելով, դարձել է ადგილად-აღგილად: Պակաս ուշագրավ չէ և հետևյալը. վրացերենի համար միանգամայն անհասկանալի է ერთბამად აღგილო სახიობილი արտահայտությունը, մինչդեռ համեմատությունից պարզվում է, որ թարգմանիչը սոսկաբար պատճենել-թարգմանել է գրաբարի «երգ առնել» (երգել սկսել) կապակցությունը, որ որքան բնորոշ է գրաբարին, նույնքան անհասկանալի է հին վրացերենի լեզվամտածողությանը: Եվ իրոք, Ագաթանգեղոսի մոտ ունենք՝ «առ հասարակ երգս առեալ բարբառեցան»:

Կարելի էր այլ օրինակներ ևս բերել, բայց այսքանն էլ բավարար է բնագրի հարցը լուծված ընդունելու համար, մանավանդ որ դրանց գումարվում են Ի. Աբուլաձեի վկայակոչած փաստարկները: Նույնիսկ կարելի է զարմանալ, որ ոչ ծավալուն այս բնագրում այդքան հայկաբանություններ են պահպանվել, երբ հաճախ ամբողջական գրքում դժվար է լինում գոնե մեկ թյուրընկալման կամ պատճենման օրինակ գտնել: Այստեղ խնդիրը միայն թարգմանչի վրիպելու «կարողությունը» չէ, այլ նաև՝ ինչպիսի հայերեն բնագիր ձեռքի տակ

ունենալն ու վրացերեն թարգմանության հետագա քիչ ոճաբանված-հարդարված լինելը։ Դրանով էլ վրացերեն թարգմանությունը նոր կարևորություն է ստանում։

Թարգմանության ժամանակը

Վրացերեն թարգմանությունը, դժբախտաբար, չունի այնպիսի հիշատակարան կամ հիշատակագրություն, որից տեղեկություններ քաղեինք թարգմանության ժամանակի մասին։ Դատելով Ռ. Բլեյկի հայտնաբերած պատառիկի գրության ժամանակից, կարելի է ընդհանուր ձևով միայն ասել, թե թարգմանությունը կատարված է XI դարից առաջ, որովհետև պատառիկը այդ դարի գրչություն է[23]։ Պատառիկի քննությամբ երկու անգամ ի մասնավորի զբաղված պրոֆ. Ժ. Գարիտը ևս նշյալ սահմանագծումից բացի որևէ թվագրության փորձ չի անում։ Պրոֆ. Ի. Աբուլաձեն կարծում է, որ այն կատարված պետք է լինի VIII դարից հետո, ելակետ ունենալով ակադ. Ն. Մառի և Իվ. Ջավախիշվիլու այն տեսակետը, թե հայերեն ազգային խմբագրությունը գոյացել է VIII դարում, իսկ քանի որ վրացերենը հիմնականում հետևում է հայերեն խմբագրությանը, ուրեմն թարգմանվել է նրա գոյացումից հետո միայն։ Թեև այս եզրակացությունը հենվում է բանասիրության մեջ եղած ոչ անհիմն տեսակետի վրա, այնուամենայնիվ, այն ինքնին կարիք ունի համոզիչ փաստարկման, մանավանդ որ Ժ. Գարիտի ուսումնասիրությամբ Ն. Մառի որոշ եզրահանգումներ կասկածի տակ դրվեցին։ Թերևս առանձին ու մենագրական բնույթի ուսումնասիրությամբ հնարավոր լինի ապագայում լուծել հայերեն խմբագրության ձևավորման ժամանակի հարցը։ Պարզ է, սակայն, որ այսօրվա բնագիրը անհնար է նույնացնել ավանդականորեն V դարի համարվող Ագաթանգեղոսի հետ։ Հունարեն, արաբերեն և վրացերեն խմբագրությունների գոյության փաստը ինքնին կասկածելի է դարձնում ավանդական տեսակետը։ Բայց դա այլ հարց է։ Կարծում ենք, որ առավել հիմնավոր է թարգմանության վերջնաժամկետի որոշումը։ Ինչպես միջնադարյան շատ այլ երկերի, այնպես էլ Ագաթանգեղոսի վրացերեն խմբագրության հետ կապված կարևոր հարցերի լուսաբանությունը հնարավոր է դառնում բացառապես բառագանձի ուսումնասիրությամբ։ Ընդունված և տասնյակ փաստերով ապացուցված իրողություն է, որ VIII դարի վերջերից սկսած վրաց գրական լեզուն բավական նկատելի փոխառություններ է անում արաբերենից և նոր պարսկերենից։ Նրանցից բառացիորեն զերծ են այն հուշարձանները, որոնք գրվել կամ թարգմանվել են VIII դարից ոչ ուշ։ Եվ իրոք, «Հռիփսիմեի վկայաբանության» վրացերեն տեքստում չկա նոր պարսկերենից կամ արաբերենից եկող ոչ մի բառ, իսկ դա նշանակում է, թե թարգմանության վերջին ժամկետը VIII դարը պետք է համարել։ Կան նաև այլ կռվաններ. պրոֆ. Ռ. Աբուլաձեն արդեն նկատել է, որ վրացերեն տեքստին հատուկ են մի շարք հնաբանություններ, որոնց առկայությունը բացառում է ուշ շրջանում թարգմանված լինելու հնարավորությունը։ Այսպես, օրինակ, սովորական ალმოსალეთი-ի փոխարեն այստեղ ունենք მზეარე, սպասվող կամ հաճախակի դարձած მღერა (სიმღერა-ի) փոխարեն դործածված է სახიობელი, որ ճշտիվ համապատասխանում է հայերենի «երգին» և այլն։ Ավելի որոշակին, սակայն, տերմինների կիրառությունն է.

[23] Տե՛ս R. P. Blake, Catalogue of the Georgian Manuscripts in the Cambridge University Library, էջ 216—221։

ինչպես և պետք էր սպասել, «աշխարհ» նշանակությամբ գործածված է "სოფელი", որ ակադ. Իվ. Ջավախիշվիլու քննությամբ հատուկ է միայն VIII և նախորդ դարերի բնագրերին։ Կարծում ենք, որ Ի. Աբուլաձեն միանգամայն իրավացի է, երբ մերժում է Պ. Ինգորոքվայի չհիմնավորված տեսակետն այդ հարցում, որով նա փորձում էր վերանայել բառիս նշանակության մեջ կատարված փոփոխության ստուգված ժամանակագրությունը։ Նույնը պետք է ասել նաև ქუეყანა-ին՝ գրաբարյան երկիր (գետին) նշանակությամբ։ Պակաս կարևորություն չունի վրացերեն տեքստի გლეხი-ն, որ համապատասխանում է հայերենի «ամբոխ»-ին։ Նշանակում է վրացերենին տակավին խորթ է «գեղջուկ» իմաստը, և բառը առհասարակ գործածված է սոցիալական ստորին խավի նշանակությամբ՝ ներառյալ քաղաքային բնակչությունը։

Այսպիսով, բավականաչափ կռվաններ կան ասելու, թե «Հռիփսիմյանց վկայաբանությունը» վրացերեն է թարգմանվել VIII դարից ոչ ուշ, իսկ թե սկզբնական սահմանը որն է՝ տակավին մնում է քննելի։ Առանց առկա բոլոր խմբագրություն-թարգմանությունների համադրության և մանավանդ հայերեն բնագրի կրած մշակում-խմբագրումների շերտերն ու ժամանակը պարզելու՝ անկարելի է ավելի վճռական բան ասել։

Վրացերեն թարգմանության և հայերեն բնագրի հարաբերությունը

Թե ինչ նշանակություն ու շահագրգռություն ունեն միջնադարյան թարգմանություններն առհասարակ՝ ինքնին պարզ է։ Թարգմանության բուն փաստի իսկ ուսումնասիրությունը տվյալ մշակույթի ու իրականության առաջադրած պահանջի վկայություն է։ Հարակից խնդիրները՝ թարգմանության տարածումն ու ազդեցությունները ընկալող մատենագրության մեջ, նրա կատարման որակը, գրական առնչություններ ներկայացնելը և այլն, կարելի կլինի քննության առարկա դարձնել այն պարագայում, երբ ուսումնասիրված ու ճշտված է ամենակարևորը՝ բնագրի ու թարգմանության տեքստաբանական հարաբերությունը։ Հայտնի է, որ պատմական-աղբյուրագիտական բնույթի հուշարձանները այլատիպներից առավել քննություն են պահանջում, որովհետև չճշգրտված տվյալների հիման վրա կառուցած տեսակետները կարող են, անիրական լինելուց բացի, սխալ կողմնորոշել տվյալ երկրի այս կամ այն շրջանի պատմությունն ու մշակույթն ուսումնասիրողներին։ Բայց և հենց այդ սկզբնաղբյուրներն են ժամանակի ընթացքում խիստ նկատելի փոփոխություններ կրել։ Այլ բան է, թե ինչ նկատառումով ու դրդումով են դրանք կատարվել. իրողությունն այն է, որ կատարվել են։ Ադաթանգեղոսի վրացերեն թարգմանությունը թերևս պակաս նշանակալից չլիներ, եթե անգամ բառ առ բառ հետևեր մեր ձեռքի տակ եղած հայերեն բնագրին. բացի ածանցյալ խնդիրներից, այն հունարենի ու արաբերենի զուգադրությամբ կօգնի բնագրի մթագնված տեղերը ճիշտ հասկանալուն, առանձին տերմին հասկացողությունները ճիշտ մեկնաբանելուն և այլն։ Կրկնում ենք, այստեղ չենք խոսում հուշարձանի՝ ընկալող մատենագրության մեջ ունեցած դերի ու նշանակության մասին։

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է եղել թարգմանչի ունեցած հայերեն բնագիրը՝ մեր ձեռքի տակ եղածի համեմատությամբ։

Բնագիր	Վրացերենը (թարգմանաբար)
Եւ�՝ իբրև լուան զայն ամենայն, զոր խօսեցաւն Գայիանէ ընդ սանուն իւրում՝ ի բաց առին զնա ի դրաց անտի։ Զի թէպէտ *և բազում անգամ հարին զնա, և ծեծեցին քարամբք զերեսս նորա, և թափեցին զատամունս նորա, և* ջարդեցին զմսուր բերանոյ լնդաց նորա՝ *սակայն ոչ շրջեաց զբանս իւր՝ խօսել ընդ աղջկանն այլ ինչ. այլ զոր սկիզբն արարեալ էր բանիցն իւրոց առաջնոց՝ զնոյն յաճախեալ բազմացուցանէր։*	*Եվ երբ լսեցին այդ ամենը, ինչ Գայանեն ասում էր իր սանին, հեռացրին նրան այն դռներից և բաղում տանջահարանք պատճառեցին, քարով ծեծեցին նրա երեսն ու թափեցին ատամները։ Սակայն նա նորից այլի չփոխեց իր խոսքը սանի հանդեպ, այլև նույն խոսքերն էր ասում, ինչ առաջ էր սկսել, նույնն էր բազմացնում։*
(§ 190)	*(173₂₈–₃₃)*
Իսկ թագաւորին թողեալ զիւր ամօթն կորանաց, որ պարտ էր նմա ամաչել, *որ այնչափ անուանի եղեալ՝ քաջութեամբ առաւելոյր ի մարտս պատերազմացն.* նա և յՈղիմպիադսն Յունաց հրսկայազօր երևեալ, *բազում գործս արութեան և անդ ցուցեալ, և ոչ սակաւ մղեալ պատերազմունս յայնկոյս Եփրատ գետոյ...*	*Իսկ թագավորը, որն անչափ քաջությամբ էր անվանի՝ հաղթանակով մարտողի դեմ ու հարձակումներում հերոսական զորություն ցույց տված, թողեց իր ամոթը։ Եվ բաղում արիություն արեց, ու ոչ սակավ ինչ կռիվներ քշեց Եփրատից այն դին...*
(§ 202)	*(176₃–₆)*
Արդ, ելեալ դահճապետն պարծելով՝ չարամահ առնել զնա, և ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտայի, որ հանէր ի Մեծամօրի կամուրջն, *ի տեղին՝ յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս,* ի նախնախուտ տեղի մի, մօտ ի պարկէն փոսին, որ շուրջ գայր զքաղաքաւն։	*Եվ պարծանքով դուրս եկավ սպասավորապետը՝ նրան սպանելու։ Հրամայեց, ու նրանց շղթայված դուրս բերին քաղաքի արևելյան կողմի դռներից, արքունական ճանապարհով, այն տեղը, ուր կոտորում էին բոլոր մահապարտներին, արտաքին դռների մոտ։*
(§ 206)	*(177₁–₄)*

Եւ բացեալ զդուրս տանն բրոնաբար՝ ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկանն. և ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա։ Եւ ընթացեալ ընդ քաղաքամէջն՝ ելանէր ընդ արևելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին։ Երթեալ առ հնձանօքն, ուր էին իսկ յառաջ վանք իւրեանց...
(§ 192)

Բացեց սենյակի դռներն ու բրոնաբար դուրս ընկավ, ճեղքեց ամբոխը, և ոչ ոք չկարողացավ բռնել նրան։ Սրընթաց դուրս էր դալիս քաղաքի փողոցները. դուրս եկավ ու գնաց այն հնձանները, ուր առաջ իր կացարանն էր...
(173$_{42}$—174$_{2}$)

Առկոչված չորս հատվածներում վեց կարևոր տարբերություն կա, եթե չհաշվենք առանձին բառերն ու կարճառոտ արտահայտությունները։ Ընդ որում, այստեղ վկայակոչեցինք այնպիսի հատվածներ, որոնց բուն տարբերությունը հայերենի համապատասխան տեղերի բացակայությունն է վրացերենում։ Եթե կարելի լիներ պնդել, թե վրացի թարգմանիչը որևէ համառոտում է կատարել՝ ինչ-որ նկատառումից դրդված, հեշտ կլիներ բացատրել այդ տարբերությունը։ Բայց դա բացառված է, որովհետև ըստ ամենայնի թարգմանիչն աշխատել է հարազատ մնալ բնագրին, երբեմն նույնիսկ բառացիության կամ պատճենման հասնելով։ Նկատելու է նաև, որ կրճատված նախադասությունները սկզբունքային (դավանաբանական կամ այլ բնույթի) նշանակություն չունեն և ոչ էլ դժվար թարգմանելի են, առավել ևս՝ թարգմանիչը նոր խմբագրություն կազմելու, երկը տեղայնացնելու, ընդմիջարկում-հավելելու ոչ մի միտում չի ցուցաբերում։ Ուրեմն մնում է միակ և ճիշտ եզրակացությունը. թարգմանչի ձեռքի տակ եղել է մի այնպիսի գրչագիր-տարբերակ, որ այսօր տակավին անծանոթ է հայագիտությանը։ Դրանով իսկ վրացերենը այս պարագայում բնագիր-սկզբնաղբյուրի արժեք է ստանում։ Ի դեպ, որպեսզի մեր ասածը ավելի նկատելի դառնա, անհրաժեշտ ենք համարում լրացուցիչ վկայակոչությունների ու այլ աղբյուրների դիմել։ Գայանեն, ըստ հայերեն Ագաթանգեղոսի, Հռիփսիմեին կոչ է անում հիշել իր՝ ի Քրիստոս կոչվածությունն ու չհանձնվել Տրդատին.

Արդ՝ զայս ամենայն խօսեցաւ սուրբն Գայիանէ ի բարբառ Հռոմայեցւոց ընդ իւրում սանուն ի դրաց սենեկին, մինչդեռ թագաւորն ոգորէր ընդ սրբոյն Հռիփսիմեայ։ Բայց գոյին անդ ոմանք ի սպասաւորացն արքունի, որ լրսէին զայն ամենայն ի բարբառ Հռոմայեցւոց։
(§ 189)

Եվ մինչ սուրբն այն Գայանե սույն խոսքերը եբրայերեն էր ասում իր սանին՝ սենյակի դռներից ներս, թագավորը ոգորում էր սուրբն Հռիփսիմեին, այնտեղ էին թագավորի սպասավորներից ոմանք, որոնք լսում էին եբրայերեն այս ամեն խոսքը։
(173$_{24-27}$)

Միայն այսօր մեզ անհայտ տարբերակ ունենալու դեպքում թարգմանիչը կարող էր «Հռոմայեցւոց բարբառ»-ի փոխարեն «եբրայերեն» խոսեցնել Գայանեին։ Անկարելի է այդ փոփոխությունը գրչական կամ այլ բնույթի սխալ-

մամբ բացատրել, որովհետև գրչությամբ նրանք միմյանցից հեռու են և մանավանդ՝ նույն պարբերության մեջ «եբրայերեն»-ը երկիցս է գործածված։ Նշանակում է տարբերության աղբյուրը թարգմանչի ձեռքի տակ եղած հայերեն բնագիրն է։ Մեր խոսքը ենթադրական կլիներ, եթե չունենայինք նման փոփոխություններ հավաստող այլ օրինակ։ Ագաթանգեղոսի մի պատառիկում (№ 1235) գիտական տեքստի (առանց որևէ տարընթերցման) «եբրայեցւոց»-ը փոխարինված է «հռոմայեցւոց»-ով։

...մարգարէք անուանեցան ի դարս առաջինս յաստուածապաշտ յազգէն Եբրայեցւոց... (§ 255)	...մարգարէք անուանեցան ի դարս առաջինս յաստուածապաշտ ազգէն Հռոմայեցւոց... (պատ. № 1213)

Հարկավ այլ խնդիր է, թե որն է ճիշտ։ Միամիտ կլիներ ենթադրել, թե մարգարեներին «հռոմայեցի» համարող հեղինակը, գրիչը կամ խմբագիրը ծանոթ չէ Աստվածաշնչի ծննդաբանությանը, մարգարեների ինքնությանը։ Ինչպես երևում է՝ հունասեր թե քաղկեդոնական խմբագիրը մարգարեներին անգամ պատրաստ է հունազգի կոչել՝ անշուշտ դավանաբանական դրդումով։ Եթե այս օրինակից կարելի է դատել, թե որքան միտումնավորություն ու միջամտություն է եղել հին պատմիչների երկերը ընդօրինակել-խմբագրելիս։ Ուստի ամենևին զարմանալի չէ, որ վրացերեն թարգմանության բնագիր հայերենում Գայանեն խոսում է «եբրայերեն»։ Եթե ընդունելի համարենք, որ «եբրայեցւոց» ազգը «հռոմայեցւոց»-ով փոխարինողը հունադավան (-քաղկեդոնական) պետք է լիներ, ապա հակառակը կատարողը՝ «հռոմայեցւոց» բարբառը «եբրայեցւոց»-ով փոխարինողը, նույնքան մոլի հակաքաղկեդոնական պիտի ներկայանա, որը նույնիսկ գերադասել է եբրայերենը, միայն թե քաղկեդոնականների (հունադավանների) նախընտրած լեզվով չլինի։

Սակայն բնագրի ու թարգմանության տարբերությունները վկայակոչվածով չեն սպառվում։ Բերենք մեկ ուրիշ օրինակ.

Իսկ իբրև իրքն հռչակեցան զնոցանէն՝ ապա աւուրս երկուս ասպարափակ արարեալ՝ տուեալ պահել զնոսա անդէն, ուր գտինն լեգէոն հետևակ զօրուն. ապա յետ երկուց աւուրցն համբաւն հռչակեալ պարկեշտութեան... (§ 162)	Եվ երբ գտան, երկու օր վահանակիրներով շրջափակեցին և պահեցին հետևակ զորքով այնտեղ, ուր որ գտան։ Երեք օր անց համբավը տարածվում էր, և լսում էին բոլորը, հոլովվում էր Հռիփսիմեի պարկեշտությունն ու գեղեցկությունը... (167_{30-33})

Այստեղ զլխավոր տարբերությունը հայերենի երկու օրվա դիմաց երեք օր ունենալն է, որ նույնպես որևէ սխալմունքի արդյունք չէ, այլ դաղափար օրինակում այդպես է եղել։ Եվ իրոք, ներկա քննական հրատարակության տարընթերցումներում ձեռագրերի մի նշանակալի թիվ (adԱԲԴԶ) «յետ երից աւուրցն» տարբերակ է ներկայացնում։

Հաճախ է արձանագրվում, որ Ագաթանգեղոսի ներկա բնագրում կան խրթին, մակդիր-հոմանիշներով հարկից ավելի ծանրաբեռնված պարբերու-

թյուններ, արտահայտություններ։ Թե որքանով են նրանք սկզբնական ու ոչ ընդմիջարկված-խմբագրված՝ կարելի կլինի ճշտել կրկնագիր տեքստի, հնագույն պատառիկների քննության ժամանակ։ Սակայն հիշյալ առումով ևս վրացերեն խմբագրությունը կարող է որոշակի նպաստ բերել. ներկա դեպքում խոսքը ոչ թե պարբերության մեջ եղած մեկ-երկու բառային տարբերության մասին է, այլ խմբագրական զանազանության.

Իսկ զթագաւորն հպարտացուցեալ ամբարհաւաճեցուցանէր ո-րոգայթադիր թշնամին՝ ի գրգռել յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեաց աստուծոյ, խելացնորեցուցեալ զնա առ ի տալ պագանել երկիր ուրուականաց մեռելոտուց, ոսկեղէն և արծաթեղէն, փայտեղէն և քարեղէն պղընձագործ պատկերաց գիցն սնոտեաց, և պղծութեանն պաշտաման։ Ուս եդեալ համբառնայր հարկանել ընդ վիմին հաստատնոյ, ընդ հաւատոցն եկեղեցւոյ. վիմին ինչ ոչ ստնանել կարացեալ՝ ինքն առ վիմին խորտակեցաւ։ Սակայն յամբարհաւանութիւն մոլեգնութեանն վստահացեալ՝ բազում և անչափ էր այն, որ ի նմանէ անցանէր ընդ եկեղեցիս աստուծոյ։

(§ 142)

Իսկ թագավորը հպարտացավ ու լցվեց ամբարտավանությամբ, քանի որ նրան հրահրում էր սատանան, և մեծ հալածանք սկսեց աստծո եկեղեցիների հանդեպ. ու անշունչ, անարժան ոսկեղեն, սին փայտեղեն և քարեղեն պատկերների ու պիղծ պաշտաման երկրպագություն կամեցավ։

(163_{32}—164_2)

Ուշադիր ու խորամուխ ընթերցելիս դժվար չէ կռահել, որ հայերեն բնագրի ընդգծված մասում նկարագրական հավելում է կատարված, մասամբ կրկնված է արդեն ասվածը, իսկ որ ամենակարևորն է՝ արդեն խոսվում է Տրդատի «ինքն առ վիմին խորտակեցաւ»-ի մասին, այսինքն ընդմիջարկվում է դեպքերի զարգացումը իմացող գրչի կողմից, բուն Ագաթանգեղոսին հատուկ չէ ելքի կանխավ ծանուցումը։ Նշածս իմաստով էլ սույն հատվածը հետագա ընդմիջարկություն է ներկայացնում։ Այժմ վրացերենի հիմամբ կարելի է վստահ ասել, որ թարգմանության հիմք բնագրում (=հայերենում) քննարկվող հատվածը չի եղել, ուստի և անծանոթ է մնացել թարգմանչին։

Կարծում ենք, որ վկայակոչված փաստերը իրավունք են տալիս եզրակացնելու, թե վրացերենի բնագիր հայերեն տեքստը նկատելիորեն տարբերվել է այժմ մեզ հայտնի տեքստից, առանձին տարբերակ է ներկայացրել[24]։ Հետևաբար, Ագաթանգեղոսի հայերեն բնագրի հրատարակությունը անհրաժեշտաբար կատարվելու է, ի թիվս այլ նոր աղբյուրների, վրացերեն թարգմանության տվյալների հաշվառմամբ։

---

[24] Հմմտ. ი. აბულაძე, նշվ. աշխ., էջ 151։

ДРЕВНЕГРУЗИНСКИЙ ПЕРЕВОД ОДНОГО РАЗДЕЛА «ИСТОРИИ» АГАФАНГЕЛА

(«Мученичество Рипсимянок»)

П. М МУРАДЯН

(Резюме)

Существование древнегрузинской редакции «Мученичества Рипсимянок» из «Истории Армении» Агафангела было констатировано Теймуразом Царевичем при составлении описи своей коллекции рукописей в 1835 г. Этим памятником частично интересовались А. Цагарели, Н. Марр, Л. Меликсет-Бек и др.

В 1932 г. проф. Р. Блейк в рукописях библиотеки Кембриджского университета обнаружил и опубликовал небольшой фрагмент из этой редакции, восходящий к XI в. Впоследствии проф. Ж. Гаритт дважды возвращался к этому фрагменту. Издание цельного текста «Мученичества» осуществил проф. И. Абуладзе (1960 г.) по рукописи А-511 и с учетом других. Издание снабжено предисловием и вокабулярием.

Изучение текстологических, лексических и стилистических особенностей древнегрузинского перевода выявило ряд новых аргументов, свидетельствующих о переводе с армянского оригинала и подкрепляющих мнение Ж. Гаритта и И. Абуладзе по данному вопросу. Переводчик допустил несколько искажений и графических ошибок, объясняемых неправильным чтением армянского текста.

Отсутствие слов новоперсидского и арабского происхождения в грузинском тексте, а также архаичные значения некоторых древнегрузинских терминов приводят к выводу, что перевод осуществлен не позже VIII в.

Сопоставление перевода «Мученичества» с армянским оригиналом показало, что имеются некоторые любопытные расхождения: в нем отсутствуют отдельные предложения и выражения, наличие которых в армянском тексте можно рассматривать как интерполяции последующих редакторов. К тому же перевод иногда находит поддержку в разночтениях отдельных рукописей. Грузинский текст порой близок к древнейшим фрагментам из «Истории» Агафангела, расшифрованным автором статьи. Делается вывод, что перевод восходит к определенной группе кодексов армянского оригинала и должен быть учтен при критике текста.